ԱՎԴ2/0131/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 ապրիլի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ2/0131/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 8-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2026 թվականի մարտի 12-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Նարեկ Արմենի

Հարությունյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-ին կետով, 396-րդ հոդվածի 1-ին մասով և 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Լիլիթ Կարենի Ներսեսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-ին կետով, Դավիթ Վաչագանի Մուրադյանի վերաբերյալ՝ 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Արթուր Քարամի Մամոյանի վերաբերյալ՝ 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 45115125 (ԱՎԴ2/0131/01/26) քրեական վարույթը:

1.1. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ռ.Ամիրջանյան) 2026 թվականի մարտի 16-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0131/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի մարտի 23-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0131/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ա.Դանիելյան) 2026 թվականի ապրիլի 8-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0131/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի ապրիլի 10-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Նարեկ Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 396-րդ հոդվածի 1-ին մասով և 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ*

մասի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ (…), չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ այդպիսիք ձեռք բերելու, պահելու կամ իրացնելու թույլտվություն, նախապես խոստանալով ձեռք բերել և իրացնել մաքսանենգ ճանապարհով տեղափոխված թմրամիջոցը, օժանդակել է մաքսանենգությամբ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և ՀՀ պետական սահմանով առանց մաքսային հսկողության, Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության պետական սահմանով առանձնապես խոշոր չափերով՝ 10985,21 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցն ապօրինի տեղափոխելուն, ինչպես նաև մի խումբ անձանց հետ ձեռք բերված նախնական համաձայնությամբ, իրացնելու նպատակով, ապօրինի ձեռք է բերել այն (…)»[1]:

4.1. Լիլիթ Ներսեսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ (…), չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ այդպիսիք ձեռք բերելու, պահելու կամ իրացնելու թույլտվություն, նախնական համաձայնության գալով իր ընկեր ***** ****** բնակիչ Նարեկ Արմենի Հարությունյանի հետ, իրացնելու նպատակով, ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով՝ 10985,21 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց (…)»*[2]:

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 186-189:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 160-162:

4.2. Դավիթ Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ (…), չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ այդպիսիք ձեռք բերելու, պահելու կամ իրացնելու թույլտվություն, նախնական համաձայնության գալով իր ընկերներ, ***** ****** բնակիչներ Ա.Կ.Բ.-ի և Արթուր Քարամի Մամոյանի հետ, իրացնելու նպատակով, ապօրինի փորձել է ձեռք բերել առանձնապես խոշոր չափերով՝ 10985,21 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց (…)»*[3]:

4.3. Արթուր Մամոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ (…), չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ այդպիսիք ձեռք բերելու, պահելու կամ իրացնելու թույլտվություն, նախնական համաձայնության գալով իր ընկեր, ******* ****** բնակիչ Դավիթ Վաչագանի Մուրադյանի և ***** ****** բնակիչ Ա.Կ.Բ.-ի հետ, իրացնելու նպատակով ապօրինի փորձել է ձեռք բերել առանձնապես խոշոր չափերով՝ 10985,21 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց (…)»*[4]:

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 202-204:
[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 173-175:

5. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի մարտի 23-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվում է, որ վարույթի մասնավոր մասնակիցները և մեղադրական եզրակացությամբ դատակոչված վկաների մեծամասնությունը ներկայումս բնակվում են Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս: Վարույթին օժանդակող անձինք՝ վկաներ Կ.Վ.Ա.-ն, Ա.Հ.Ֆ.-ն, Ա.Տ.Ֆ.-ն, Ֆ.Ա.Մ.-ն, վարույթի մասնավոր մասնակիցներ՝ մեղադրյալի դատավարական կարգավիճակում հարցաքննված Կ.Պ.Գ.-ն, մեղադրյալներ Նարեկ Արմենի Հարությունյանը, Լիլիթ Կարենի Ներսեսյանը և Արթուր Քարամի Մամոյանը և վերջիններիս պաշտպաններ Վարդուհի Սարգսյանը և Արթուր Օհանյանը բնակվում են ***** ********:*

*Այսինքն՝ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը (10-ը) բնակվում են առաջին ատյանի մեկ այլ դատարանի՝ մասնավորապես՝ ***** ******* ****** ****** ******** ********** ********* ******* ********:*

*Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261–րդ հոդվածի 5–րդ մասի համաձայն՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար անհրաժեշտ է, որպեսզի վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվեն առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում, Դատարանը փաստում է նաև, որ վարույթին օժանդակող անձ՝ թարգմանիչ Ա.Ա.-ն նույնպես բնակվում է *. *******:*

Ավելին, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի համաձայն՝ նախաքննությունն իրականացվում է այն վայրում, որտեղ կատարվել է ենթադրյալ հանցանքը, իսկ դա պարզելու անհնարինության դեպքում ենթադրյալ հանցանքի բացահայտման վայրում: Միաժամանակ պատշաճության և համակողմանիության ապահովման նպատակով, իրավասու վերադաս դատախազի որոշմամբ, նախաքննությունը կարող է կատարվել ենթադրյալ հանցագործության բացահայտման, դրա հետևանքների վրա հասնելու, ինչպես նաև մեղադրյալների, տուժողների և վկաների մեծամասնության գտնվելու վայրում:

Հետևաբար, հաշվի առնելով սույն գործի հանգամանքները նախաքննության կատարման վայր է հանդիսացել Երևան քաղաքը (մասնավորապես՝ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունը):

Նախնական դատալսումների ժամանակ պաշտպանական կողմը միջնորդություն է ներկայացրել քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, հանրային մեղադրող Մարատ Հակոբյանը չի առարկել ներկայացված միջնորդության դեմ (սույն քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը հաստատել է ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Մարատ Հակոբյանը): Դատարանը փաստում է, որ սույն քրեական գործով դեռևս հիմնական դատալսումներ նշանակելու մասին որոշում չի կայացվել, հետևաբար որևէ ապացույց չի հետազոտվել և ընդդատությունը փոխելով չի տուժի նաև արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի քրեական գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու վերաբերյալ սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ բավարարված են ՀՀ քրեական դատավարության 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար սահմանված պահանջները, ինչով էլ պայմանավորված՝ Դատարանը որոշում է պաշտպան Վարդուհի Սարգսյանի կողմից ներկայացված միջնորդությունը բավարարել, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և այն փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[5]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Ք]րեական գործի նյութերից երևում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցների հարցը (որը*

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 113-117:

քննարկվում է ընդդատության հարցի քննարկումից հետո), 2023 թվականի մարտի 23-ի որոշումներով համապատասխանաբար՝

*- վարույթի մասնավոր մասնակիցներից՝ մեղադրյալ Լիլիթ Ներսեսյանի նկատմամբ կալանքի ձևով կիրառված խափանման միջոցը փոխել է և որպես համակցված խափանման միջոցներ է կիրառել՝ տնային կալանքը և բացակայելու արգելքը, ավելին՝ որպես տնային կալանքի կրման վայր սահմանել է ********** ***** **** ****** ********** ****** *** * ***** *** *** *********,*

*- վարույթի մասնավոր մասնակիցներից՝ մեղադրյալ Արթուր Մամոյանի նկատմամբ տնային կալանքի ձևով կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգել է 3 (երեք) ամիս ժամկետով, որի ընթացքում արգելվել է մեղադրյալին լքել ******** ***** ****** ***** *. ********* ******* *** * ****,*

*- վարույթի մասնավոր մասնակիցներից՝ մեղադրյալներ Նարեկ Հարությունյանի և Դավիթ Մուրադյանի նկատմամբ կալանքի ձևով կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգել է 3 (երեք) ամիս ժամկետով (վերջինները գտնվում են ** ** «*******» ********** *********):*

*Բացի այդ ըստ մեղադրական եզրակացությանը կցված վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների տեղեկանքի (այսուհետ՝ նաև Տեղեկանք)՝ քրեական գործով առկա են վկայի դատավարական կարգավիճակով 7 (յոթ) անձինք, որոնցից 4-ն (չորս) են բնակվում ***** *******: ***** ******* են բնակվում նաև պաշտպաններ Վարդուհի Սարգսյանը, Արթուր Օհանյանը: Դատարանն արձանագրում է, որ վարույթին ներգրավված են նաև հանրային պաշտպաններ Երեմ Դավթյանը և Արմեն Պողոսյանը:*

Այսպիսով, վարույթի դատավարության մասնակիցներից (մասնավոր մասնակիցներ և օժանդակող անձինք) վեցն են բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, իսկ մնացած մասնակիցները՝ այդ տարածքից դուրս, այդ թվում՝ բոլոր մեղադրյալները:

Այս համատեքստում Դատարանը հարկ է համարում նշել, որ առնվազն անհասկանալի է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի մարտի 23-ի որոշմամբ արված եզրակացությունն առ այն, որ մեղադրյալներ Նարեկ Արմենի Հարությունյանը, Լիլիթ

*Կարենի Ներսեսյանը և Արթուր Քարամի Մամոյանը բնակվում են ***** *******՝ այն պայմաններում, երբ Արթուր Քարամի Մամոյանի և Լիլիթ Կարենի Ներսեսյանի տնային կալանքի կրման վայրերը սահմանվել են հենց Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի մարտի 23-ի համապատասխան որոշումներով ***** ******* ****, իսկ Նարեկ Հարությունյանի (ով գտնվում է «*******» ***-**) կալանքի ժամկետը երկարաձգվել է նույն դատարանի կողմից: Ավելին՝ նշվել է, թե մեղադրյալի դատավարական կարգավիճակում հարցաքննված Կ.Պ.Գ.-ն բնակվում է ***** *******, այն պայմաններում, երբ Տեղեկանքի համաձայն նա բնակվում է ******** ******, իսկ դրանից հետո նրա բնակության վայրի փոփոխության մասին տվյալներ առկա չեն վարույթի նյութերում:*

Բացի այդ՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը որևէ հիմնավորում չի պարունակում այն մասին, թե Երևան և Արտաշատ քաղաքների միջև հեռավորության պայմաններում՝ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների համար Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածք ներկայանալուն ինչը և ինչպես կարող է խոչընդոտ հանդիսանալ կամ ազդել գործը ողջամիտ ժամկետներում քննելու վրա: Ավելին՝ բոլոր մեղադրյալների անազատության մեջ գտնվելու պայմաններում առանց համոզիչ հիմնավորման գործի տարածքային ընդդատության ձևական փոփոխությունը ողջամտորեն կարող է վտանգել ողջամիտ ժամկետում գործի քննությանը:

(...) Այսպիսով՝ սույն քրեական գործի ուսումնասիրությունից հետևում է, որ այն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, բացակայում է դրա ընդդատությունը փոխելու իրավական հիմքը (մասնավոր մասնակիցների և օժանդակող անձանց մեցծամասնությունը չեն գտնվում Երևանի տարածքում), համոզիչ կերպով չի հիմնավորվել նաև ընդդատությունը փոխելու պայմանները (բացառիկ դեպքը և քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից):

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը սույն գործը վարույթ ստանձնելու և քննելու դեպքում կլինի ոչ պատշաճ դատարան, արդյունքում կխախտվի անձի արդար դատաքննության իրավունքը և թույլ կտրվի քրեադատավարական օրենքի էական խախտում (հետագա դատական ակտի անվերապահ բեկանման հիմք), ուստի գործը պետք է ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատին՝ ընդդատության հարցը լուծելու համար: (…)»[6]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ2/0131/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի*

[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 177-183:

կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[7]*:*

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[8]*:*

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[9]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»:*

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

---

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[8] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

11.1. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը բազմիցս ընդգծել է, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- վարույթին ներգրավված են թվով 16 մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից. թեև մեղադրյալ Ն.Հարությունյանը դատական նիստի ընթացքում հայտնել է, որ բնակվում է ***** *******[10], սակայն ըստ մեղադրական եզրակացության՝ վերջինը հաշվառված է ***** ******* և բնակվել է ******** ****** (ներկայում պահվում է «*******» քրեակատարողական հիմնարկում), մեղադրյալ Լ.Ներսեսյանը բնակվում է ***** *******, սակայն ներկայում նրա նկատմամբ կիրառված խափանման միջոց տնային կալանքի կրման վայր է սահմանվել ********** *****, մեղադրյալ Ա.Մամոյանը բնակվում և իր նկատմամբ կիրառված խափանման միջոց տնային կալանքը կրում է ******** ******, մեղադրյալ Դ.Մուրադյանի բնակության վայրն է ******* ***** (ներկայում պահվում է «*******» քրեակատարողական հիմնարկում), մեղադրյալի դատավարական կարգավիճակով հարցաքննված Կ.Գ.-ի բնակության վայրն է ******** *****, վկաներ Ա.Գ.-ի և Գ.Ղ.-ի բնակության վայրն է ******* *****, վկա Ռ.Ա.-ի բնակության վայրն է ***** ******, վկաներ Կ.Ա.-ի, Ա.Հ.Ֆ.-ի, Ա.Տ.Ֆ.-ի և Ֆ.Մ.-ի բնակության վայրն է ***** ******, վարույթին ներգրավված պաշտպաններից երկուսի՝ Վ.Սարգսյանի և Ա.Օհանյանի բնակության վայրն է ***** ******: Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից սույն վարույթի տարածքային ընդդատության հարցի քննարկման պահին

[10] Տե՛ս դատական նիստի արձանագրություն, հատոր 12, թերթ 78:

վարույթին ներգրավված են եղել նաև հանրային պաշտպաններ Ե.Դավթյանը և Ա.Պողոսյանը, որոնց գործունեության վայրն է ******* *****:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչպես նաև այն, որ առկա է մեղադրյալների համաձայնությունը՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, գտել է, որ ողջամիտ ժամկետում քննության ապահովման տեսանկյունից քրեական վարույթի հետագա քննությունը պետք է իրականացվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում[11]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը չի բնակվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչպես նաև այն, որ Երևան քաղաքի և Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արտաշատ նստավայրի միջև հեռավորության պայմաններում՝ սույն վարույթով առկա չէ ողջամիտ ենթադրություն կամ փաստարկ առ այն, որ վարույթի մասնակիցների համար դատարանի տարածքը կարող է խոչընդոտ հանդիսանալ կամ ազդել գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի ապահովման վրա, գտել է, որ սույն վարույթով բացակայում է տարածքային ընդդատությունը փոխելու իրավական հիմքը, և Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից համոզիչ կերպով չեն հիմնավորվել տարածքային ընդդատությունը փոխելու պայմանները՝ բացառիկ դեպքը և վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից[12]:

---

[11] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[12] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատն իր համաձայնությունն է հայտնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատողությանն առ այն, որ սույն վարույթին ներգրավված տասնվեց մասնավոր մասնակիցներից և վկաներից ***** ****** ****** ****** ******** ********** ******* ******** ******* ******** բնակվում են միայն երկու պաշտպաններն ու չորս վկաները: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում փաստել նաև, որ, անգամ ներկայում «*******» ********** ******** պահվող մեղադրյալ Ն.Հարությունյանին և ********** ****** տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալ Լ.Ներսեսյանին՝ որպես ***** ******* բնակվող դիտարկելու պարագայում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում բնակվող վարույթի մասնավոր մասնակիցները և վկաները մեծամասնություն չեն կազմում:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է նաև, որ մեղադրյալ Ա.Մամոյանի և մեղադրյալի դատավարական կարգավիճակով հարցաքննված Կ.Գ.-ի՝ ***** ******* բնակվելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի փաստարկը չի բխում վարույթի նյութերից:

14. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ2/0131/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

15. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՎԴ2/0131/01/26 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ